զրանցում էր հավաքած տուրքերի հաշիվը։ Մեկ էլ föսան էր. սա գլխավոր գերակատարներից մեկն էր։ Երեսը ծածկված էր քեչայից շինած դիմակով՝ աչքերի և բերանի տեղը բաց, դիմակի տակին՝ այծի դազիլից երկար մորուք, գլխին՝ այծի երկար պոզեր, դիմակը ներկված էր լինում կարմիր և ուրիշ գույներով. կողքից՝ փայտե սուր, կրծքին՝ ոսկորներ։ Ամեն տեսակ մասխարությունները էին անում և Իշխանի, Փաշայի, Խանի ճանապարհից սրան նրան փախցնում, ամեն պատահողին ծաղրում և տուրքեր պահանջում։ Մեկ անգամ Գորիսում Իշխանը, Փաշան կանգնում է հաշտարար դատավորի տան առջև և յասաուլներին հրամայում է դուրս քաշել դատավորին։ Նրան բերում են Իշխանի առջևը կանգնեցնում են, թե՝

«Դու չե՞ս լսել, որ Իշխան-Փաշան եկել է, չե՞ս ասում դուրս գամ առաջը»։

Յասաուլները դուրս են քաշում նրան և նրա ամբողջ ընտանիքին կանգնեցնում Իշխանի առջև։ Իշխան-Փաշան ձեռքը բարձրացնում է և ցույց տալիս՝

— Բա չե՞ս տեսնում, որ Իշխան-Փաշան եկել է, բա չե՞ս ասում, որ այս ղոշունին[32] ի՞նչ ես տալու։

Հաշտարար դատավորը հարցնում է, թե ի՞նչով պիտի Իշխան-Փաշայի սիրտը շահի պատժից ազատվելու համար։ Իշխան-Փաշան պահանջում է փող, օղի, գինի, և ամեն տեսակ միրգ։ Հաշտարար դատավորը վճարում է։

Մի ուրիշ տնից դուրս են քաշում գյուղի բեգին և մի կտորով ձեռները կապոտած ներկայացնում են Իշխան-Փաշային։ Նա էլ տասը ռուբլի է տալիս և պատժից ազատվում։ Մտնում են նույնիսկ գավառապետի տունը։ Ոչ ոք իրավունք չուներ հակառակել Իշխան-Փաշայի հրամաններին կամ վիրավորվելու նրա կարգադրություններից։ Զուռնա-դավալը շարունակ նվագում էր, föսան պարում էր, ծամածռություններ անում, պատահողին ծաղրում, սրախոսություններ անում։ Հավաքած փողով ու մթերքով այդ կիրակի օրը գիշեր ու ցերեկ քեֆ էին անում և մնացորդ փողը քեֆից հետո իրար մեջ բաժանում։ Պատահում էր, որ միևնույն գյուղում երկու զանազան խմբեր երկու Իշխան-Փաշա էին ընտրում. նրանք իրար պատահելիս իրար էին ծաղրում, հայհոյում էին։ Դեպքեր են եղել, երբ իրար հետ ընդհարվել են և մեջներից վիրավորվածներ, նույնիսկ սպանվածներ են եղել։ Դրա համար ոչ ոք պատասխանատվության չէր կանչվում։

Այս բարեկենդանական թատերախաղերը, որոնք նմանություն ունեն հունական աշխարհում տարածվածների հետ և այնտեղ այդ Դիոնիսին նվիրված այծախաղով սկիզբ դրին թատերական ներկայացումներին, տարածված էին հայաբնակ բոլոր վայրերում, մանավանդ արևելյան շրջաններում, այն տարբերությամբ, որ Իշխանի, Փաշայի փոխարեն հանդես էին գալիս Խանը, Թաքավորը կամ մի այլ լիաիրավազոր իշխանավոր և այլն։

Խաղը կատարում էին նաև Վրաստանի մայրաքաղաքում՝ Տփղիսում, դարերի ընթացքում, գերազանցորեն հայազգի բնակչության կողմից։ Այնտեղ այդ խաղերը կոչվում էին Ղէյինօբա, մի անուն, որն անշուշտ ծագել է խանան, ղանան, ղէյին բառից՝ խան կրճատ բառի նախնական լրիվ ձևից՝ Կիրակոս Գանձակեցու հաճախ գործածած ձևից։ Նման խաղեր ավելի բարդ ու բազմաթիվ դիմակներով տեղի էին ունենում նաև Հյուսիսային Կովկասի լեռնաբնիկների մեջ, սակայն ոչ անպատճառ բարեկենդանական օրերին։ Այնտեղ այդ խաղերը կապված են եղել նույնպես երիտասարդների ընկերակցու-

---

[32] Ղորքին։